ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնապատ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Լեռնապատ, 032268781, lernapat.lori@mta.gov

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 ՄԱՅԻՍԻ 2021թվականի N 16-Ա

ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀօրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետին համապատասխան

Լեռնապատ համայնքի ավագանին որոշում է,

Հաստատել 31 մայիսի 2021 թվականի Լեռնապատ համայնքի ավագանու թիվ 04 նիստի օրակարգը ըստ հավելվածի:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԲԱՋՅԱՆ ԱՐԿԱԴԻ

ԳԱԼՍՏՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐՏԱԿ

ՔՈՋԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԻԲԵԿ ԱԲԱՋՅԱՆ

Հավելված

Լեռնապատ համայնքի ավագանու

31 մայիսի 2021 թվականի 16-Ա որոշման

ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ

1. *Ավագանու նիստի օրակարգը հաստատելու մասին:*

2. Լեռնապատ համայնքի ավագանու 2020թ. դեկտեմբերի 24-ի <<Լեռնապատ համայնքի 2021թ.-ի բյուջեն հաստատելու մասին >> թիվ 50-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

3. .<< Լոռու մարզի Լեռնապատ համայնքում արխիվային գործի վարման կարգը հաստատելու մասին

4 << 'ԼՄ Լեռնապատ համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կազմը հաստատելու մասին

5. Համայնքի սոցիալական անապահով ընտանիքներին սոցիալական օգնություն հատկացնելու մասին

6. Ասֆալտապատ ճանապարհի քանդման և վերականգնման համաձայնության մասին

7.Լեռնապատ համայնքի գույքագրման փաստաթղթերում կատարված փոփոխությունը հաստատելու մասին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԻԲԵԿ ԱԲԱՋՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնապատ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Լեռնապատ, 032268781, lernapat.lori@mta.gov

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 ՄԱՅԻՍԻ 2021թվականի N 17-Ն

ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N50-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-Ինմասի 5-րդ կետով, <<ՀՀ բյուջետային համակարգի մասին>> ՀՀ օրենքի 33-րդ հոդվածով և <Նորմատիվ իրավական ակտերի մասին> ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածով՝

Լեռնապատ համայնքի ավագանին որոշում է.

1.Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնապատ համայնքի ավագանու 2020թ դեկտեմբերի 24-ի <<Լեռնապատ համայնքի 2021թվականի բյուջեն հաստատելու մասին>> 50-Ն որոշման մեջ կատարել փոփոխություններ՝ համաձայն հավելված 1:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԲԱՋՅԱՆ ԱՐԿԱԴԻ

ԳԱԼՍՏՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐՏԱԿ

ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԻԲԵԿ ԱԲԱՋՅԱՆ

հավելված 1
ԼԵՌՆԱՊԱՏ համայնքի ավագանու
« 31 » մայիսի 2021թ թիվ 17 Ն որոշման
(հազար դրամներով)

Տողի NN	Եկամտատեսակները	Հոդվածի NN	նախահաշվի ցուցանիշները	նախահաշվում կատարված փոփոխություն-ները (ավելացումը՝ /+/, պակասեցումը՝/-/	սույն նախագծով հաստատվող ցուցանիշները
					ֆոնդային մաս
1	2	3	4	5	6
1000	ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ (տող 1100 + տող 1200+տող 1300)		9037.0	702.2	9739.2
1111	այդ թվում՝ Գույքահարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող շենքերի և շինությունների համար		2.0	-2.0	0.0
1112	Հողի հարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող հողի համար		3822.1	-2852.9	969.2
1113	Համայնքի բյուջե մուտքագրվող անշարժ գույքի հարկ		0	2817.1	2817.1
1121	Գույքահարկ փոխադրամիջոցների համար		5212.9	740.0	5952.9

Տող ի NN	Բա-ժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ինչպես նաև բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	Հոդված	Նախահաշվի ցուցանիշները	Նախահաշվում կատարված փոփոխություն-ները (ավելացումը՝ /+/, պակասեցումը՝ /-/	Սույն նախագծով հաստատվող ցուցանիշները
1	2	3	4	5	6	7	8	9
2000	X	X	X	ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ (տող2100+տող2200+տող2300+տող2400+տող2500+տող2600+ տող2700+տող2800+տող2900+տող3000+տող3100)		40773.2	702.2	41475.4
2111	01	1	1	-Հատուկ նպատակային այլ նյութեր	4269	100.0	100.0	200.0
2161	01	6	1	-Մասնագիտական ծառայ.	4241	200.0	100.0	300.0
2161	01	6	1	-պաշտպանիր վճար	4823	100.0	200.0	300.0
2451	04	5	1	ճանապարհային տրանսպորտ	5112	0.0	14293.8	14293.8
2451	04	5	1	ճանապարհային տրանսպորտ	5113	22459.0	-14673.8	7785.2
2451	04	5	1	ճանապարհային տրանսպորտ	5134	500.0	380.0	880.0
2911	09	1	1	Նախադպրոցական կրթություն	4637	9040.0	550.0	9590.0
3112	11	1	2	ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ	4891	8374.2	-247.8	8126.4

Համայնքի ղեկավար՝ Ս. Արազյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ
ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնապատ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Լեռնապատ 27փ.7/6 , 093627570 , lernapat.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 ՄԱՅԻՍԻ 2021թվականի N 18 -Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՐԽԻՎԱՅԻՆ ԳՈՐԾԻ ՎԱՐՄԱՆ ԿԱՐԳ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Արխիվային գործի մասին,, ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով, ,,Տեղական ինքնակառավարման մասին,, ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

1. Հաստատել ՀՀ Լոռու մարզի Լեռնապատ համայնքում արխիվային գործի վարման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. 2021թ-ի դրությամբ ժամանակավոր պահպանության ժամկետը լրացած համայնքային սեփականություն համարվող արխիվային փաստաթղթերի սեփականության իրավունքը փոխանցել պետական սեփականության՝ մշտական պահպանության:

3. Համայնքի ղեկավարին՝ հետագայում պահպանել սույն կարգով սահմանված ժամկետում համայնքային սեփականություն համարվող արխիվային փաստաթղթերի սեփականության իրավունքի փոխանցումը պետական սեփականության:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԲԱՋՅԱՆ ԱՐԿԱԴԻ
ԳԱԼՍՏՅԱՆ ԱՐԱՅԻԿ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐՏԱԿ
ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

Համայնքի ղեկավար՝ **Ս. ԱԲԱՋՅԱՆ**

Հավելված
Լեռնապատ համայնքի ավագանու
2021թ-ի մայիսի 31-ի թիվ 38-Ա որոշման

ԿԱՐԳ

ԱՐԽԻՎԱՅԻՆ ԳՈՐԾԻ ՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում է Հայաստանի Հանրապետության արխիվային հավաքածուի և արխիվային այլ փաստաթղթերի (անկախ դրանց նկատմամբ սեփականության իրավունքից) համալրման, հաշվառման, պահպանության, օգտագործման, ինչպես նաև արխիվային գործի հետ առնչվող իրավահարաբերությունները:

2. Համայնքի ավագանին՝

1) որոշում է կայացնում համայնքային արխիվի ստեղծման, վերակազմակերպման կամ լուծարման մասին.

2) որոշում է համայնքային սեփականություն համարվող արխիվային փաստաթղթերի սեփականության իրավունքի փոխանցումը պետական սեփականության:

3. Համայնքի ղեկավարը՝

1) ներկայացնում է ավագանու հաստատմանը համայնքային արխիվ ստեղծելու, վերակազմակերպելու կամ լուծարելու մասին որոշման նախագիծը.

2) ապահովում է համայնքային արխիվի, համայնքային այլ կազմակերպությունների արխիվային փաստաթղթերի համալրումը, հաշվառումը, պահպանությունը և օգտագործումը:

3) կազմակերպում է համայնքի արխիվային գործի վարումը.

4. Համայնքի աշխատակազմը՝

1) ապահովում է համայնքի արխիվային գործի վարումը.

5. Համայնքային արխիվների ֆինանսական ու նյութատեխնիկական ապահովումն իրականացվում է համայնքային բյուջեների միջոցների հաշվին:

6. Տեղական ինքնակառավարման մարմինները և նրանց ենթակայության տակ գտնվող կազմակերպությունները, իրենց գործունեության ընթացքում առաջացած արխիվային փաստաթղթերի համալրման, հաշվառման, պահպանության և օգտագործման նպատակով մինչև պետական կամ համայնքային արխիվ մշտական պահպանության հանձնելը կամ օրենսդրությամբ սահմանված կարգով ոչնչացնելը պարտավոր են ստեղծել արխիվ:

7. Համայնքի սեփականություն են՝

1) տեղական ինքնակառավարման մարմինների, համայնքային կազմակերպությունների արխիվային փաստաթղթերը.

2) իրավաբանական և ֆիզիկական անձանց՝ համայնքին որպես սեփականություն հանձնած արխիվային փաստաթղթերը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

8. Հայաստանի Հանրապետության արխիվային հավաքածուի համայնքի սեփականություն համարվող փաստաթղթերի պահպանությունն իրականացվում է հետևյալ կերպ.

1) մշտական պահպանություն՝ պետական կամ առկայության դեպքում համայնքային արխիվներում:

2) ժամանակավոր պահպանություն՝ տեղական ինքնակառավարման մարմիններում, համայնքային կազմակերպություններում՝ սույն օրենքով սահմանված ժամկետների ընթացքում:

9. Հայաստանի Հանրապետության արխիվային հավաքածուի՝ համայնքի սեփականություն համարվող փաստաթղթերի ժամանակավոր պահպանության ժամկետները լրանալուց հետո կարգավորված, տեղեկատու-որոնողական միջոցների հետ մշտական պահպանության են հանձնվում պետական կամ առկայության դեպքում համայնքային արխիվներ:

10. Հայաստանի Հանրապետության արխիվային հավաքածուի փաստաթղթերը ժամանակավոր (մինչև պետական կամ համայնքային արխիվներ մշտական պահպանության հանձնելը) պահպանելու առավելագույն ժամկետ տեղական ինքնակառավարման մարմինների և համայնքային կազմակերպությունների փաստաթղթերի համար սահմանվում է 5 տարի.

11. Տեղական ինքնակառավարման մարմինները և համայնքային կազմակերպություններն ապահովում են Հայաստանի Հանրապետության արխիվային հավաքածուի կազմում ընդգրկված փաստաթղթերի կարգավորումը, նախապատրաստումը և պետական կամ համայնքային արխիվներ մշտական պահպանության հանձնումը:

12. Տեղական ինքնակառավարման մարմինների և համայնքային կազմակերպությունների լուծարման դեպքում Հայաստանի Հանրապետության արխիվային հավաքածուի կազմում ընդգրկված փաստաթղթերը (ներառյալ՝ մինչև 2013 թվականի հունվարի 1-ը անձնակազմին վերաբերող) հանձնվում են պետական կամ համայնքային արխիվներ:

13. Համայնքային կազմակերպությունների մասնավորեցման (սեփականաշնորհման) դեպքում Հայաստանի Հանրապետության արխիվային հավաքածուի կազմում ընդգրկված փաստաթղթերը (ներառյալ՝ մինչև 2013 թվականի հունվարի 1-ը անձնակազմին վերաբերող) հանձնվում են պետական կամ համայնքային արխիվներ:

14. Համայնքային կազմակերպությունների լուծարման դեպքում լուծարային հանձնաժողովը կազմակերպում է լուծարվող կազմակերպության մինչև 2013 թվականի հունվարի 1-ը գործունեությամբ առաջացած անձնակազմին վերաբերող փաստաթղթերի առանձնացումը և հանձնումը պետական կամ համայնքային արխիվ:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Հ. Վարդանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնապատ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Լեռնապատ, 03226878I, lernapat.lori@mta.gov

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
31 ՄԱՅԻՍԻ 2021թվականի N 19-Ա

ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը և ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 13-րդ հոդվածով, ՀՀ <<Ընտանեական օրենսգրքի>> 109-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 02 հունիսի 2016թ.N631-Ն որոշմամբ, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով , 37 հոդվածով.

Լեռնապատ համայնքի ավագանին որոշում է.

1.Հաստատել Լեռնապատ համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովը հետևյալ կազմով՝

հանձնաժողովի նախագահ՝ Ապրես Ոսկանյան
քարտուղար՝ Հասմիկ Վարդանյան
անդամներ.
դպրոցի տնօրեն՝ Աննա Աբազյան
դասվար՝ Լիանա Աբազյան
ավագանու անդամ՝ Արայիկ Քոչարյան
համայնքային ծառայող՝ Գոհար Շուշանյան
համայնքային ծառայող՝ Ռուզաննա Եղիազարյան
բուժքույր՝ Աննա Բեգլարյան
ոստիկանության ավագ տեսուչ՝ Միեր Փարեմուզյան
մարզպետարանի առաջատար մասնագետ՝ Գառնիկ Սաղաթելյան

2. Ուժը կորցրած ճանաչել 11 ապրիլի 2019թ. <<Լեռնապատ համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կազմը հաստատելու մասին>> թիվ 16-Ա որոշումը:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԲԱՋՅԱՆ ԱՐԿԱԴԻ
ԳԱԼՍՏՅԱՆ ԱՐԱՅԻԿ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐՏԱԿ
ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԻԲԵԿ ԱԲԱՋՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնապատ համայնք
գ.Լեռնապատ,27փ. 7/6 հեռախոս /032266781/, Lernapat.Lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 ՄԱՅԻՍԻ 2021 թվականի N20–Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետին, համայնքի ավագանու 2017 թվականի հունիսի 06—ի Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնապատ համայնքի կամավոր խնդիրները, կամավոր խնդիրներին ուղղված սեփական լիազորությունները և դրանց լուծման նպատակով իրականացման կարգը սահմանելու մասին» թիվ 17-Ա որոշմանը, 18 դեկտեմբերի 2018թվականի թիվ 47-Ա որոշմանը համապատասխան և ստացված դիմումները՝ սոցիալապես անապահով խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունը, Լեռնապատ համայնքի ավագանին որոշում է.

1. Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից նրանց ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն՝ ըստ հավելվածի:
2. Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում բնակիչներին վճարել հատկացված գումարները:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԲԱՋՅԱՆ ԱՐԿԱԴԻ
2. ԳԱԼՍՏՅԱՆ ԱՐԱՅԻԿ
3. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐՏԱԿ
4. ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԻԲԵԿ ԱԲԱՋՅԱՆ

Հավելված

ՀՀ Լոռու մարզի Լեռնապատ համայնքի ավագանու

2021 թվականի մայիսի 31-ի N20-Ա որոշման

ՑՈՒՑԱԿ
ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՑՈՒՔԵԻՑ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

Սոցիալական օգնություն

1.Եսայան Սուրեն Մացակի 30/երեսուն/հազ դրամ
2.Ավետիսյան Հարություն Էդիկ 30/երեսուն/հազ դրամ
3. Աբազյան Գայանէ Ամասյայի 20/քսան/ հազ դրամ
4. Խաչատրյան Էդիտա Էդիկի 20/քսան/ հազ դրամ
5. Բեգլարյան Աննա Սպարտակի 20/քսան/ հազ դրամ

Ընդհամենը՝ 120 /հարյուրքսան/ հազ դրամ

Նորածինի ծնողներին

1.Աբազյան Արեն Մելսիկի 10/տաս/հազ դրամ
2. Սմբատյան Արմինե Սմբատի 10/տաս/հազ դրամ
3. Հոռոմսիմյան Սարո Վանիկի 10/տաս/հազ դրամ

Ընդհամենը՝30/երեսուն/հազ դրամ

Ուսանողի համար

1. Մելքոնյան Անի Հովհաննեսի 30/երեսուն/ հազ դրամ

Ընդհամենը՝ 30/երեսուն/ հազ դրամ

Մահացածի ընտանիքի անդամին

1.Սիմոնյան Տիգրան Աշոտի 50/հիսուն/ հազ դրամ

Ընդհամենը՝ 50/ հիսուն/ հազ դրամ

Համայնքի ղեկավար՝ Ս. Աբազյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնապատ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Լեռնապատ, 0322268781, lernapat.lori@mta.gov

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 ՄԱՅԻՍԻ 2021թվականի N 21-Ա

ԱՍՖԱԼՏԱՊԱՏ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՔԱՆԴՄԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով <<Դորոժնիկ>> ՍՊԸ-ի տնօրեն Ա. Հովհաննեսյանի 27.05.2021թ.-ի թիվ 53-01/2 գրությունը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածով,

Լեռնապատ համայնքի ավագանին որոշում է.

Համաձայնություն տալ համայնքի ղեկավարին ասֆալտապատ ծածկույթի կտրման համար՝ համայնքային ենթակառուցվածքների ծրագիր II , փուլ 3 Հայաստանի ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածք (ՀԵԾ II -Փուլ 3) ծրագրի շրջանակներում Լեռնապատ համայնքի թիվ 27 փողոցում W-2, W-1-21, W-1-22, W-1-26 ջրագծերի թվով 4 լայնական հատումներ կատարելու նպատակով:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԲԱՋՅԱՆ ԱՐԿԱԴԻ

ԳԱԼՍՏՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐՏԱԿ

ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԻԲԵԿ ԱԲԱՋՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնապատ համայնք
գ.Լեռնապատ, հեռախոս /03226876/, Lernapat.Lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 ՄԱՅԻՍԻ 2021 թվականի22 –Ա

ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը և ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 77 հոդվածի 3 կետով՝

Լեռնապատ համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Լեռնապատ համայնքի գույքագրման փաստաթղթերում կատարված փոփոխությունը՝ համայնքապետարանի հաշվեկշիռ մուտքագրված բարձրախոս SAYONA-. 1 հատ վերագնահատված արժեքը՝ 5250դրամ, նվիրատվություն կատարել Լեռնապատի <<Մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ին և մուտքագրել Լեռնապատի <<Մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի հաշվեկշիռ:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԲԱՋՅԱՆ ԱՐԿԱԴԻ
2. ԳԱԼՍՏՅԱՆ ԱՐԱՅԻԿ
3. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐՏԱԿ
4. ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԻԲԵԿ ԱԲԱՋՅԱՆ